




ԱԳՐՈՎԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ



Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլխավոր Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիոմերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):

ԱԳՐՈՎԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ

ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Կենսաբազմազանությունն հասկացությունը կազմված է երկու բառից՝ կենսաբանություն և բազմազանություն ու սովորաբար օգտագործվում է կենդանի օրգանիզմների տեսակային բազմազանությունը և փոփոխականությունը նկարագրելու համար: Լայն իմաստով այն ներառում է բազմաթիվ այլ չափանիշներ և հանդիսանում է «կյանքը երկրի վրա» հասկացության հոմանիշ:

Ի՞նչ է ագրոկենսաբազմազանությունը

Ագրոկենսաբազմազանությունը կենսաբազմազանության բաղադրիչն է, որն օգտագործվում է սննդամթերքի արտադրության և գյուղատնտեսության վարման ընթացքում՝ իր մեջ ներառելով բույսեր, կենդանիներ, սնկեր, մանրէների բազմազանություն և այլն:


Կենսաբանական ռեսուրսների պահպանում

- Ագրոկենսաբազմազանությունը ռեսուրս է առանց որի մարդկությունը գոյություն ունենալ չի կարող, լինեն դրանք միջատները, որոնք փոշոտում են բույսերը, բակտերիաները, որոնք օգտագործվում են պանրի արտադրության մեջ, անասունների բազմազան ցեղատեսակներ կամ սորտային կուլտուրաների հազարավոր տեսակներ, որոնք ապահովում են պարենային անվտանգությունը ամբողջ աշխարհում:
- Ագրոկենսաբազմազանությունը պարենային զամբյուղի և սննդակարգի բազմազանության գրավականն է, ինչն ապահովում և պահպանում է մարդկանց առողջությունը:
- Պաշտպանության առաջնահերթ օբյեկտներ են հանդիսանում կենդանիների ազգային ցեղատեսակները և բույսերը, ինչպես նաև դրանց վայրի ցեղատեսակները:

Ագրոկենսաբազմազանությանը սպառնացող հիմնական վտանգները

Գյուղատնտեսական ռեսուրսների կենսաբանական և գենետիկ բազմազանության սարսափելի արագությամբ տեղի ունեցող աղետալի նվազումը պայմանավորված է՝

1. Բնապահպանական իրադրության փոփոխությամբ (գլոբալ տաքացումներ, կլիմայի փոփոխություն, բնածածկույթի վատթարացում, բիոցենզի խախտում):
2. Բնական միջավայրի կորուստ, այդ թվում անտառների կորուստ, անապատացում և գետերի ավազանների ջրային ռեժիմի փոփոխություն,



3. Տեղական սորտերի և դրանց գենետիկ բազմազանության հաստատուն օգտագործման պաշտպանության և պահպանության բնագավառում օրենսդրական դաշտի բացակայությամբ:





Ողջ աշխարհում ագրոկենսաբազմազանությունը և մասնավորապես գենետիկ բազմազանությունը գտնվում են անհետացման վտանգի առջև: Այդ ռեսուրսների գենետիկ փոփոխության

ընթացքում մարդկությունը կորցնում է հիմնական բազային պոտենցիալը, ինչը նպաստում է գյուղատնտեսական կուլտուրաների և պարենային ապրանքների ստացմանը, որոնք հարմարեցվել են ժամանակակից փոփոխվող պայմաններին:

Ջրային կենսաբազմազանություն. ի՞նչ է սպասվում

Ջրային աշխարհի կենդանական ու բուսական բազմազանությունը գտնվում է վտանգի տակ՝ կապված դրանց չափից դուրս օգտագործման, օտարածին տեսակների ներդրման և տարածման հետ:

Վտանգի տակ են հայտնվել ձկնորսության հետագա զարգացումը և դրա միջոցով գոյություն ապահովող համայնքների միջոցները:



Միջատների կենսաբազմազանություն.


Ինչի՞ են հանգեցնում նոր տեխնոլոգիաների կիրառումը և քիմիական նյութերի օգտագործումը

Ապացուցված է, որ գյուղատնտեսությունում տեխնիկական և քիմիական միջոցառումների կիրառումը (հատկապես պեստիցիդների ակտիվ օգտագործումը) իր հետ բերում է փոշոտող միջատների կորստի, որոնք իրենց հերթին ապահովում են սննդամթերքի արտադրությունը:



Անտառային կենսաբազմազանություն. ի՞նչ է մեզ սպասում

Կլիմայի գլոբալ փոփոխությունը և անտառահատումները սպառնում են անտառային տեսակների գենետիկ բազմազանությանը, որը հանդիսանում է պարենի սկզբնաղբյուր: Անտառային համայնքների կողմից կատարած ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ պոտենցիալի ոչնչացումը զգալի վնաս է հասցնում մարդկության պարենային անվտանգությանը և ավելի է քան անտառահատումներից ստացված օգուտը:



Ագրոկենսաբազմազանության սխալ պլանավորումը և ռեսուրսների շահագործումը



Գենետիկ բազմազանության կորուստը կարող է տեղի ունենալ նաև տեղական սորտերի և ցեղատեսակների ոչ ճիշտ պլանավորած փոփոխությամբ և օգտագործմամբ այն տեսակներով, որոնք հատուկ չեն տեղային պայմաններին:

Գենետիկ էռոզիան կարող է ծագել նաև օտարածին վնասակար տեսակների, մոլախոտերի և հիվանդությունների, ինչպես նաև փոփոխված կենդանական օրգանիզմների ազդեցության հետևանքով, ինչը բերում է զգալի փոփոխությունների հողօգտագործման մեջ և վատթարացնում է շրջակա միջավայրի վիճակը:

Ագրոկենսաբազմազանության սորտերի մասին հուշագրավ տվյալներ



Խնձորի 7000 տեսակներից այսօր մնացել են միայն 900-ը:




SALOME

TITUS

TOMPKINS KING



Տանձի 2600 տեսակներից մնացել է 330-ը:



Ամբողջ աշխարհում անհետացել է խոշոր եղջերավոր անասունների
ցեղատեսակների 33%-ը:



Տեղական պայմաններին հարմարեցված սորտերի և ցեղատեսակների
փոխարինումը կոմերցիոն սորտերով և ցեղատեսակներով, որոնք չեն պլանավորվում

երկարաժամկետ հեռանկարի համար, կարող են բերել գենետիկ բազմազանության կորստի:

Գենետիկ ռեսուրսների կորուստը գյուղատնտեսական պրակտիկայում բերում է սննդամթերքի բազմազանության, դեղագործական և կոսմետիկ պրեպարատների արդյունաբերության և ազգային ինքնատիպության բազմազանության կորստի: